

«ՈՐՊԵՍ ԽԱՉՎԱԾ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ...»

«Պոեզիա, որը մաքրում է արյունը» - այսպես է բնութագրել լիտվացի մեծ բանաստեղծ Էդ. Մեժելայտիսը Վահագն Դավթյանի ստեղծագործությունը՝ բարության, լույսի ու գեղեցիկի համար պայքարող գրողին վերագրելով իսկական ազգային բանաստեղծի վեհ կոչումը:

«Կորուստների մի ծանր բեռով ես մտա կյանքի ու գրականության մեջ»: Այս խոստովանությանը հաջորդում է առավել ցավալին. «Գրական մթնոլորտը կորուստ ու ցավ երգելու համար ոչ միայն բարենպաստ չէր, այլև հակացուցիչ էր»:¹ 20-րդ դարի կեսերն էին: Անառողջ միջավայրում «երկու մթան նեղլիկ արանքում» խարխալեղով՝ Վ. Դավթյանն էլ մյուս գրողների նման ցավն անթելել էր հոգու խորքում:

1972 թ. լույս տեսավ «Անկեզ մորենի» ժողովածուն, որտեղ «ծննդավայր» խորագրի տակ ամփոփվեցին Դավթյանի հուշակարոտային տեսիլքները: Բնաբանը Նարեկացու տողերն էին. «Մի լիցի ինձ երկնել և ոչ ծնանել, ամպել և ոչ անծրեել, ընթանալ և ոչ հասանել»: Իսկ վերնագիրը ժողովրդական լեզենդից է՝ այրվող, բայց չմոխրացած մորենին, որին, ինչպես և մեր ժողովրդին, «չկա սպառում, չկա վախճան»: Ջրնգում է բեկված կարոտի ծայնալարը, հնչում է եփրատի ողբը, արթնանում են մանկության հուշերը: Իրոք, ցավի հետ խառնված է քնքշանքը, ոտքից փուշ հանող մանկան նման անգոր է բանաստեղծը: Այդ չհանվող փուշը զուգորդվում է նրա խոսքերին. «... տանջալի պիտի լինի սերն այն բանաստեղծի, որ աշխարհում կարող է ամեն տեղ գնալ, բայց չի կարող գնալ հայրենի տուն»: Եվ կրկին ցավն է՝ «Տեր իմ, ինչու» ինձ տվիր ծանր արյունը հայի»:

Բանաստեղծական ներշնչման բյուրեղաքարեր են Հայաստան երկրին ծոնված բառապատկերները. կաթող ծաղիկ ու ծիածան, մամուռի լաց, վիհի մխանք, քարի արցունք, քարե հառաչանք, բզկտված լույս, ներման թավիշ, վրեժի եղջյուր... Մեժելայտիսը նկատել է. «Նա հոգով ու մարմնով հայրենի հողից է,

1. Վ. Դավթյան - «Լույս առավոտի», «Սովետական գրող», Երևան, 1984թ. էջ 10:

պատրաստ պաշտպանելու նրան վտանգից»:¹ Դրա վկայությունն է «Պարտք» բանաստեղծությունը ծնկաչոք մի աղոթք, երգում ուղղված իր «քարեղեն ճակատագրին»: Այստեղ «ես իմ անուշ»-ի նվագները կան. չեն մոռացվում ոչ արևահամ, ոսկեղենիկ լեզուն, ոչ հայկական բնաշխարհի յուրահատկությունները, ոչ պատմական դառը կորուստներն ու վերքերը, ոչ էլ վերքը սրտում հեռվից նայող Արարատը: Ու այս ամենը կապույտի մեջ ընդելուզված (սկսվում և ավարտվում է Հայաստանի խորհրդանիշ կապույտով): «Միշտ էլ զգացել եմ, որ պարտք եմ կյանքի ու իմ ժողովրդի պատմության դրամատիզմին»,² - գրել է Դավթյանը: Իսկ տաղերում ինքնայրու՜մ է.

Ախ, իմը սեր չէ, որ խոստովանեմ,
Իմը կրակ է և այրվող աղյուն...

Մեր հարատևության խորհուրդը գրողը համարում է չորս ամրակուռ սյուները՝ Մաշտոց, Խորենացի, Նարեկացի, Թումանյան: Իսկական բանաստեղծի մտահոգությունը պիտի լինի ժողովրդի ազգային ու բարոյական նկարագրի անաղարտությունը: Ուժ, թե՛ բարոյականություն. այս հարցին փորձում էր պատասխանել նաև Պերճ Զեյթունցյանի հերոսներից մեկը՝ նախապատվությունը տալով բարոյականությանը: Սա է օղ ու ջրի պես անհրաժեշտ ժողովրդին, - այս համոզմունքն ունի և Վահագն Դավթյանը: «Մեր գոյության դարավոր հենասյուները՝ մայրենի լեզվի պաշտամունքն ու պահպանումն, մեր պատմության հայրենասիրական ոգին, հոգու և խղճի նարեկյան մաքրությունը, առողջ կենսափիլիսոփայությունը»:³

Իր ստեղծագործություններում բազմիցս անդրադարձել է հայոց լեզվի առեղծվածին: «Ասք Մաշտոցի մասին» պոեմում այդ լեզվի խնկարկուն է, ժողովրդին անմահացնող ու հայ պահող լեզուն, որի մեջ լացող մամուռի քնքշությունը զուգորդվում է քարափների վայրագ կռիւնչին («Մեր լեզուն ճկուն է ու բարբառոս»):

Մեր կեսը տվինք, բայց քեզ չտվինք,
Ու թե քեզ դավենք, ուրեմն չկանք...

1. Էդ. Մեծեկայտիս - «Իմ կրկնակի Արարատը», «Սովետական գրող», Երևան, 1984թ. էջ 233:

2 Վ. Դավթյան - «Լույս առավոտի», «Սովետական գրող», Երևան, 1984թ. էջ 11:

3. Նույն տեղում, էջ 15:

Արդիական հնչողություն ունեն այս պատգամ-երդման պես հնչող տողերը. լեզվից հրաժարումով է սկսվում ազգային օտարացումն ու կործանումը: Ու՛մ համար են մեր մագաղաթները «շնչել տառապանքի խավարը» և արտաշնչել « առավոտ լուսո»: Բանաստեղծի տազնապ է, որ պետք է խորապես զգալ և վերահաղորդել սերունդներին, սա Աբովյանի կոչն է. «Ղայիմ պահեք հայոց լեզուն», սա Րաֆֆու ազգապահպանման ամհանգստությունն է, որն այսօր. առավել քան երբևէ, կարիք ունի ուշադրության:

Մեր՝ տառապանքի մեջ կոփված ոգու, գոյատևման, մեր պատմության և ներքին հպարտության, մեր ամմար հույսի մասին է «Գիշերային գրույց Նարեկացու հետ» պոեմը: Սա լոկ գրույց չէ, այլ համանվագ հիշեցմող ալեկոծում, կասկածանքի ու մաղծի դեղին մոլուցք. Նարեկյան խղճի ու բարության դասեր առած ազգը այսօրվա պարտության համար ու՛մ պիտի մեղադրի, մեր կորուստների համար ինչքա՞ն պիտի մորմոքա: Գուցե սխալը հենց այդ բարոյակա-նություն կոչվածին ապավինելն էր, գուցե վանքեր ու ոստան կառուցելու փոխարեն մենք էլ պիտի սրեինք մեր ժանիքները, նենգեինք ու խարդավեինք, աստղոտ ցորենի հրաշքի տեղ ապավինեինք յաթաղանին ու «որո՞մ խառնեինք օտարի հացին»: Գուցեներն ու կասկածները թույնի պես ծորում են բանաստեղծի շուրթերից, սակայն անմիջապես էլ հաջորդում է զղջումը.

Բայց մեղա՛, մեղա՛, ինչեր են ասում...
Բերանս ծեփիր քո արդար աջով...

Ի վերջո, բանաստեղծը, մեր ժողովրդի հոգևոր արժեքները՝ լույսը, խիղճն ու բարությունը զովերգելով, հարազատ է մնում իր էությանը, իր ներքին ծայնին ունկնդիր՝ ճշմարիտ է համարում զրահի փոխարեն աստծո լույսը հագ-ցնելու նարեկացիական դավանանքը: Պոեմն ավարտվում է հույսի մենածայ-նով՝ աշխարհի խղճին թողնելով մեր արդար դատը՝ պիտի սպասենք պատմու-թյան ատյանին: Այս պայմանով է հաշտվում անցյալի հետ: Ճշմարտությունը չի կարող մեռնել. ողջամտության ուժով պիտի մաղծը փարատել:

Վ. Դավթյանը պոեզիան համարում է ներդաշնակության հասնելու կրքոտ ձգտում: Իսկական բանաստեղծ լինելու և հարատևելու համար նա առաջարկում է իր տեսությունը. «Չարկավոր է լինել մոլորակ, սեփական օրենքներով ապրող, սեփական մթնոլորտ, սեփական գույներ, լեռներ ու

անդունդներ, հովիտներ ու դաշտեր, մահ գաղտնի քարանձավներ ունեցող մոլորակ: Եվ այնքան էլ կարևոր չէ, մեծ է այդ մոլորակը, թե փոքր:¹ Բացել ուրույն մի աշխարհ, նորարար լինել և մահից առնվազն 50 տարի հետո կծշտվի՝ մեծություն էր մա, թե՞ ոչ: Նման կասկած ունեցել են երևի շատերը, մահ Դավթյանը, որին Սեփելայտիսը «բացառիկ զգայուն էության տեր բանաստեղծ» է համարում:

Սիրային քնարերգության մեջ բանաստեղծի զարմանալի ընտրությունն է ակնբախ. ամմնացողը նվիրում ու պաշտամունք «մեղսոտ ու մաքուր» կնոջ հանդեպ, Մանոն Լեսկոյի, Լիլիթի աներկբա նախապատվություն: Նրան ավելի ձգում է հրաբխի կարմիր ու վտանգավոր ծաղիկը, քան հեզ մանուշակը /եվան/: Սա անբացատրելի է մահ իր համար.

Այն մեղավոր աչքերն ինչու՞ են ինձ կանչում,
Եվ ինչու՞ եմ անդող աչքերի դեմ այս ջինք...

Իսկական կինը՝ անհնազանդ ու սեթևեթ, ինքնավայել նազանքով, իր հոգին խռովում է խեղճացնող ծիծաղով, միաժամանակ փխրում է, աղոթքի պես խոնարհ, դյուրաբեկ ու քնքուշ: Կանացի խաղերին գերի է դարձել իր հոգին.

Վանել գիտեին մատներդ բարակ,
Հայացքդ գիտեր կիսախուփ կանչել...

Քուչակի «ուներով խոսող» կինն է, հայրենների գեղուհին, «երգ-երգոց»-ի Սուլամիթն է՝ համարձակ ու վտանգավոր, անթաքույց իր սիրո կարոտով, իսկ ինքը սիրածի գեղեցկության առջև ծնկաչոք, նրա հմայքին հավերժ գերի այն «հոյակապ սիրահարն է», որին Սևակը «քայլող սեր» է անվանում: Սիրո ոգեղեն ասքը ճյուղավորվում է, երգը դառնում է հրդեհ, որի մեջ այրվում է: Սևակն էլ «Օրինյալ լինի մահ տված տառապանքդ» էր բացականչում, քանզի համոզված էր՝ հոգին մաքրվում է տառապանքով: Համո Սահյանի «Եվ ոչինչ հարկավոր չէ ինձ, Հերիք է լինելը» տողերին է համահունչ Դավթյանի սիրային քնարը՝ հավերժական այդ ալեկոծությունը: Կարևոր չէ՝ ուրախություն է բերում այդ սերը, թե տառապանքը, հրճվանք, թե թախծ: Կարևորը զգացմունքի ապրեցնող առկայությունն է, նրանցից թևածող լույսը, որը հենց կյանքն ինքն է: Առեղծված կնոջ ներկայությունը երջանկությունն է.

1. Վ. Դավթյան - «Լույս առավոտի», «Սովետական գրող», Երևան, 1984թ. էջ 12:

Այսպես նման էիր դու իմ անրջանջին,
Այնպես նման չէիր դու ոչ ոքի...

«Տարի ինձ, քամի» բանաստեղծությունը նմանություն ունի Սևակի «Նահանջ երգով» պոեմին: Օրինակներ կան գրեթե բառացի նկարագրության. թափուր մնացած ձեռքի հիշողությունը, ներող ծյան բարությունը, կոպերի ներքո սիրածի փխրուն նազանքի պատկերը: Անզորությունից երկուսին էլ ճնշում են սենյակի պատերը:

Ես ի՞նչ անեմ հիմա,
Արդյոք փողո՞ց նետվեմ՝
Վայելելու մենակ օրհնությունն այս ծյունի...

Եվ Սևակի՝ կարոտից խենթացած հերոսը.

Ինձ փողոց եմ նետում,
Գցում բուքի բերան,
Իսկ դու բքի միջից իմ առջև ես ելնում...

«Ծովի օրենքով» է կոչվում սիրային շարքը, որն իսկապես էլ մոտեցող ու հեռացող, վանող ու կանչող ալիքների պես հարափոփոխ է: Սիրո պարզևած տառապանքի քաղցրությունն ըմբռնանելը հատուկ է մեծ հոգիներին: Սայաթ-Նովան էլ տառապեց, բայց երբեք չանիծեց, զայրացավ, բայց երբեք չչարացավ, ճիշտ է նկատել Թումանյանը:

Վ. Դավթյանի սիրերգության անբաժանելի մասն է հիացմունքը կնոջ մարմնական գեղեցության համդեպ: Երգահանի մեղեդու երգեցիկ ելևէջներն են դողանջում բանաստեղծական տողերում՝ ապացուցելով այն ճշմարտությունը, որ գրական խոսքը գունային և հնչյունային մի ամբողջություն պիտի լինի: Վկայությունը «Ճերմակ ձիավորը» պոեմում կանանցի գեղուհիների նկարագրությունն է: Ամեն մեկի համար Դավթյանը գտնում է համապատասխան գունավորում և մեղեդի, նա կերտում է անմոռանալի կտավներ մեր ոսկեդենիկ լեզվի նրբերանգներով: Վերածննդի վարպետներին արժանի մի կտավ է Կլեոպատրայի կերպարի նկարագրությունը: Վրժնի փոխարեն բառն է հուրհրատում, թագուհու քայլերի մեջ բազմալար տավիղներ են թաքցրած, և որքան ավելի դյուրի՜ է նրա գեղեցկությունը, այնքան ավելի է արժեքավորվում Արտավազդի մերժումը:

Բանաստեղծը երկրպագում է Նարեկացու «թիկնեթեկին» քայլող, ծոցը լուսափայլ վարդերով լցված գեղեցկուհուն, որը դարեր հետո պիտի նույն հիացմունքին արժանանար, քանզի կինը հենց կյանքն է.

Ու երբ թեքվում էր նա լուսամուտին,
Օձիքը բացվում,
Բացում էր իմ դեմ մի քնքուշ հովիտ,
Ուր ծվարել էր երանությունը...

Համո Սահյանը այսպես է գրել «Լույս առավոտի» ժողովածուի լույս ընծայումից հետո. «Երբ արվեստը ստեղծվում է ցավի հիմքի վրա, ապա ցավը մահանում է, և մնում է արվեստը»: Լույսի գովերգումն էլ հին արմատներ ունի մեր գրականության մեջ: Հետաքրքիր է ընտրված խորագիրը՝ «Լույսն իբրև հաց»: Հոգևորի և նյութականի համադրումն ու հակադրումն է, սոսկ համեմատությունն է այն է, որ Վահագն Դավթյանը տեսնում է լույսի շաղոտ շուրթերով շշնջալ հաշտության խոսքը, սիրտը մաքրել մաղձից, կասկածներից, պարտության մատնել գիշերային կույր խարխափումները, վախը, տվայտանքը: Լույսը խորհրդանիշ է անմոխիր, իսպառ այրման, մեծ մաքրության, որը մարդուն աղբյուրի ալիք է դարձնում, հանում սրտից նախանձի սև փուշը ու տալիս ներման շնորհը: Սա քրիստոնեական անափ բարությանը համարժեք տարրն է.

Լույս առավոտի,
Իջիր աշխարհին, իջիր լիաբուռ,
Իջիր ու թաքուն փոխվիր բարության...

Վ. Դավթյանը հաճախ է անդրադարձել մեր պատմության հայտնի դեպքերին ու դեմքերին, որոնք իրենց վսեմ առաքինությամբ ու վեհամծնությամբ մեր ժողովրդի «ազնվությանն վկայականն են» աշխարհի առաջ: Բարոյականության հաղթանակը ավելի բարձր է, թեև ուժն ամենագոր է, ուժով ձեռք բերած հաղթանակը ակնառու: Հպարտության անկոտրում այդ ոգու ժառանգորդներն ենք մենք, - սա է ցանկանում ասել հեղինակը: Բոլորիս մեջ էլ պիտի մի քիչ Մուշեղ լինի, մի քիչ Արտավազդ, մի քիչ ճարտարապետ Հովման, Սմբատ Ջարեհավանցի: Ու կարևոր չէ, որ նրանք կյանքով են հատուցում իրենց ճշմարտության համար: Եթե մահը պարտություն է, ուրեմն ինչպես Վարդգես Պետրոսյանի հերոսն է ասում. «Այդ սքանչելի պարտության կենացը»:

«Թոնդրակեցիներ» պոեմում Սմբատը խաչված մարգարեի պես իշխում է իրեն սպանողների հոգուն, ազատության համար ծնվածը ազատ էլ մեռնում է. նա չի կարող ստրուկ լինել: Արտավազդի արհամարհական հայացքը և այրական հպարտությունը մեզ անհրաժեշտ էին, որպեսզի հասկանանք երբեք չխոնարհվելու պատգամը, ոչինչ չխնդրելու ուժեղներից, ինչպես խորհուրդ էր տալիս առեղծվածային Վոլանդը: Սուշեղի մեծահոգությունից մեզ է հասել գինու գավաթին պատկերված ճերմակ ձիավորի առասպելը, որ միշտ վերապատմում ենք սիրով ու հպարտությամբ: Ըստ Վ. Դավթյանի, սա պիտի ապրեցնի ազգը, հոգևոր հարստությունը, մշակույթը, որով պիտի տարբերվենք մյուսներից: Անհատականությունը բնական հոգեվիճակ է և բացառում է ամեն տեսակի կեցվածք:

«Ինձ թվում է - գրում է Մեծելայտիսը, - Վահագն Դավթյանը իր բանաստեղծություններն այնպես նրբորեն ու հմտորեն է քանդակում, ինչպես հայկական հին վարպետներն էին քանդակում խաչքարը»:¹ Հատկապես պատկերավոր մտածողությունը, լեզվական նրբությունները, հզոր ու հարուստ խոսքը մեծապես հարստացրին մեր պոեզիան: Ջարմանալի զուգաձևեր ու մակդիրներ կան, մեղրամոմե բարդիներից մինչև քարե ըմբոստություն, քնաթաթախ սարսափ և քնքշանքից ցավող մատեր... Համեմատության զանազան դրսևորումներ բառային, պատկերային, կերպարային, ձայնային:

Լողացող կինը նման է տազնապած կարապի, սիրտը՝ լուսաթաթախ մանկան, գիշերը Պիղատոսի պես լվանում է գունատ ձեռքերը, բարդիները «լույս պաղատող սրբի ձեռքեր են բարակ», Հայաստանը կապույտ է, եգիպտոսը՝ կարմիր (տոթ, բոսոր), Կլեոպատրայի կարմիր առագաստանավը առանձնանում է ճերմակների մեջ, կարմիրն այստեղ կրքի, հոգու և մարմնի հրդեհի գույնն է: Իսկ «ճերմակ ձիավորը» պոեմում Շապուհի ալ կարմիր ծիրանին, աչքերը, մորուքը արյան խորհրդանիշ կարմիրն են, քանզի նրա արքաներն էլ արյունաբբու գազանի են նման: Դեղինը զառանցանքի և ունայնության, տենդի և անքնության գույնն է: Գունային հակադրությունները «Ռեքվիեմ» պոեմում ցցող մի պատկեր են ստեղծում՝ սև գիշեր, դեղին ավազ և կարմիր լուսին.

Կարմիր լուսնի տակ

Եփրատը կարմիր ցուլանք էր տալիս,

Ու թվում եր ինձ,
Թե երակն է մա,
Բացված երակն է
Հայոց աշխարհիս:

Վ. Դավթյանի բանաստեղծությունների մեջ առատորեն օգտագործված են լեզվական հատկապես երկու միջոցները կրկնություններն ու հակադրությունները: Վերջինիս անգերազանցելի վարպետը եղել և մնում է մեծ Նարեկացին: Դավթյանի մոտ էլ կա այդպիսի միտում՝ հավատարիմ մնալ մեր հին Գողթան երգերին («Վահագնի ծնունդը»), հայրեններին, միջնադարյան մանրանկարչության նման քանդակազարդ տաղերին:

Կրկնության տեսակներից մեկը՝ հարակրկնությունը (անաֆոր), բնորոշ է եղել ժողովրդական բանահյուսությանը, էպոսում ևս շատ է գործածվել (հատկապես Մելիքի հրամանում): Վ. Դավթյանի մոտ կրկնությունը չափազանց եռաձայն է հանդիպում. դա մրա պոեզիայի առանձնահատկություններից մեկն է: Օրինակ՝ քարավանի ընթացքը օրեր շարունակ.

Գնում են, գնում, գնում են առաջ,
Գնում է, գնում է քարավանն առաջ:
Քարշ տալով իր հետ փոշոտ մի հառաջ,
Քարշ տալով իր հետ փոշոտ մի ծարավ,
Փոշոտ մի անեծք, փոշոտ մի արև,

Առձայնությո՜ւն ու բաղաձայնությունը շոշափելիության աստիճան ակնբախ են. այստեղ հնչյունների անիմաստ կուտակում չկա, ամեն ինչ իմաստավորված է.

Միանգամից ծիծաղեցին ծնծղաները պղնձաձայն...

Իր երկիրն ու ժողովրդին ինքնամոռաց սիրող բանաստեղծը, մրա «խաչված գեղեցկության» առջև ծնրադիր, իր երակներում հեկեկացող պարտությունների դեղին մորմոքը պահած շարունակվում է հիացնել, հիշեցնել, թե որտեղից ենք եկել և ուր ենք գնում...

Օգտագործված գրականության ցանկ

1. Վահագն Դավթյան - Երկեր, հատոր 1-ին, 2-րդ, Ե., 1985թ.
2. Վահագն Դավթյան - «Լույս առավոտի» Ե., 1984թ.
3. Էդուարդաս Մեծելայտիս - «Իմ կրկնակի Արարատը» Ե., 1984թ.
4. Վահագն Դավթյան - «Ի սկզբանե էր բանն ...» Ե., 1989թ.